ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ք. Երևան, Մամիկոնյանց 46/5

«20» 09 2016 թ. N 51-ա

Հայաստանի Հանրապետության քննչական
կոմիտեի մարզային քննչական վարչությունների
և դրանց ստորաբաժանումների պետերին

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ

ԴԱՏԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԲԺՇԿԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆԻ ՄԱՍՆԱԳԵՏՆԵՐԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետությունում դատահոգեբանական փորձաքննություններ իրականացնող փորձագիտական հիմնարկների ծանրաբեռնվածությունը թոթափելու, քրեական գործերով նախաքննության ժամկետների երկարացումները նվազեցնելու, վարույթի մասնակիցների՝ քրեական գործերը ողջամիտ ժամկետում քննելու սահմանադրական իրավունքը երաշխավորելու նպատակով և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով՝

Հանձնարարում եմ՝

1.Քրեական գործերով դատահոգեբանական փորձաքննություններ նշանակելու անհրաժեշտության դեպքում դրանց կատարումը, որպես կանոն, հանձնարարել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի բժշկական հոգեբանության ամբիոնի մասնագետներին՝ բացառությամբ հատուկ փորձաքննությունների:

2.Փորձաքննություն նշանակելու մասին որոշումն ուղեկցող նամակով ուղարկել Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարանի միջազգային գործունեության և արտաքին կապերի գծով պրոռեկտորին և Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի ղեկավարին:

3.Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի ղեկավարին՝ ապահովել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մարզային քննչական վարչությունների և դրանց ստորաբաժանումների վարույթում քննվող քրեական

գործերով դատահոգեբանական փորձաքննությունների ծառայության գործընթացը՝ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին համապատասխան:

4. Հետագա վճարումն ապահովելու նպատակով՝ փորձաքննության կատարողական ակտը եռօրյա ժամկետում ուղեկցող նամակով հանձնել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի ղեկավարին:

5.Սույն հանձնարարականի պահանջների կատարման նկատմամբ վերահսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետին:

6. Սույն հանձնարարականն ուղարկել Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի նախագահի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի տարածքային քննչական վարչությունների գործունեության վերահսկողության գլխավոր վարչության պետին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի մարզային քննչական վարչությունների և դրանց ստորաբաժանումների պետերին, Հայաստանի Հանրապետության քննչական կոմիտեի դեպարտամենտի ղեկավարին:

Ա. Գ. Հովսեփյան